

ՆՈՒՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՔ

Պ. Վահան Դանիէլեան (Պուքրէշ) նուիրեց մէկ տարեկան Անանիոս Պուքրէշի «Երեւան» Գեղարուեստական Միութեան:

Պ. Հայկազն Գույումճեան (Մարտէլ) նուիրեց մէկ տարեկան Անանիոս Երեւանի Հանրային Մատենադարանին:

ՍՏԱՑԱՆՔ

Ընդարձակ ճարեցոյց Ս. Փրկչի Ազգային Հիւանդանոցի. 1932. Նոր Շրջան Ա. Տարի, կազմեց թ. Ազատեան, Կ. Պոլիս. Տպագրութիւն 3. Մ. Սեթեան, 1932: Գրական ճոխ եւ աշխատանքային բովանդակութեամբ պատկերազարդ գեղեցիկ հատոր մը: Գին 200 դրուշ, արտասահմանի համար՝ 1 տոլար 50:

Երուանդ Գ. Աղաթօն.— Ոգտակար գիտելիքներ եւ գործնական խրատներ հայ երկրագործներուն. Վիեննա, Միսիթարեան տպարան, 1932. 2րդ:

Ուսումնասիրութիւն հայ գեղարուեստի պատմութեան համար.— Ա. Վիշապը հայկական գորգերուն մէջ.— Բ. Որդան /կարմիր/ կամ Kirmiz, աշխատասիրեց Յարութիւն Դիւրտեան (արտատպուած բազմավէպէն), պատկերազարդ, Վիեննայի, Ս. Ղազար, 1932: Գին 2 զուիցեր. ֆրանք:

Մենք. պարբերաթերթ թիւ 3. Փարիզ, Յրանսա եւ Սուրիա, 6 թիւի համար՝ 40 ֆրանք. Ամերիկա 2 տոլար, ուրիշ երկիրներ 50 ֆրանք: Դիմել՝ Nichan Béchtachlian, 261 Faubourg St. Martin, Paris (10e):

Նախատակ գրագէտներու բարեկամներ. Մատենաշար թիւ 6.— Գրիգոր Զօհրապ. Ծանօթ դէմքեր, բանաստեղծութիւններ. Արմակ էջեր, Պատմութիւններ: Փարիզ, 1932: Գին 20 ֆրանք Յրանսա եւ գաղութներ ու Պալ-քաններ, մէկ տոլար՝ միւս երկիրներ: Այս շարքի 12 հատորին (որուն վեցն արդէն երեւցած են) զինն է՝ աշտմէն բաժանորդագրուողներուն համար 200 ֆրանք: Դիմել՝ Mr. M. Barsamian, 121 rue Marcadet, Paris. Ամերիկայի համար՝ M. L. T. Boyajian, 108 7 th Avenue. New York City, U. S. A.

ARAZ, շարաթաթերթ, արտօնատէր 3. Աւետիքեան, պատ. տնօրէն Արտ. Թովմասեան, Ա. տարի. 1932, թիւ 1-5. Հասցէ՝ 3, Str. St. IonNou, Bucarest. Roumanie, տարեկան բաժնեդինն է 500 լէյ:

QUATRE CONFÉRENCES SUR L'ARMÉNIE faites en Hollande, suivies d'une note sur la Hollande et les Arméniens, par FREDERIC MACLER. Librairie d'Amérique et d'Orient Adrien-Maisonneuve, 5 rue de Tournon. Paris, 1932:

ՈՍՏԱՆԻԿ.— Որեւելքէն Արեւմուտք, Պօլ-մա: Փարիզ, տպագրութիւն «Արաքս» — Թօփալեան, 1932. գին 5 ֆրանք. զիմել գրատուն Հրանտ Սամուէլ, 51 Rue Monsieur le Prince, Paris: կամ հեղինակին, V. Ohannessian, 29 Rue Gay-Lussac, Paris:

ՎՐԻՊԱԿ.— «Անահիտ», Գ. Տարի թիւ 3-4 Սեպտ. Դեկտ.— «Գրագէտը եւ մարդը Մ. Խորենացիի մէջ», էջ 9, Ա. սիւնակ: տող 3-4, «Այդ նոյնացմամբ ճիշտ չի կրնար ըլլալ Ե. դարու այդ Մովսէսը», ուղղել՝ Այդ նոյնացումը ճիշտ չի կրնար ըլլալ. Ե. դարու այդ Մովսէսը...»

«Անահիտ»ի Գ. տարուան թիւ 1-2, յօդուած Գ. Հնասէրի, էջ 137, սիւնակ 1., վարէն երրորդ տող. «Երկանեան ամիրայ», ուղղել՝ «Երկան ամիրայ»: էջ 143, սիւնակ Բ., տուն 65, չորրորդ տող, «հատտ ունի նէ», ուղղել «հատտ ունիս նէ»:

«Անահիտ»ի Գ. տարուան թիւ 3-4ի մէջ Գ. Հնասէրի յօդուած, էջ 140, սիւնակ Բ. տող 22, բէպապճը Առաքել, ողղել՝ Բիւթապճը Առաքել, էջ 147 սիւնակ Բ. տող 34, պատերազմական նախարարը, ուղղել... նախարարին. էջ 148, սիւնակ Բ. տող 37, ինչ անձանօթ, ուղղել՝ ինչ ծանօթ. էջ 151, սիւնակ Ա. տող 16, Մկրտիչ Աղաթօն, ուղղել՝ Միքայէլ Աղաթօն:

«Անահիտ» թիւ 3-4, Սարգիս Մեհեանի Արեւին հետ հնչեակին մէջ, առաջին տունին առաջին տողը՝ սխալմամբ տունին վերջը գրուած է: Նոյն հնչեակին մէջ, երրորդ տուն, սառոյցը, ուղղել՝ սառոյցը:

“Անահիտ”ի բաժանորդներուն

Այս թիւով կը լրանայ «Անահիտ»ի նոր շրջանի երրորդ տարին, նախկին շրջանն ալ հաշուելով՝ տասնհինգերորդ տարին։ Այս թիւը քիչ մը ուշ մնաց, իմ Ռուսական ճամբորդութեանս եւ այս վերջին 6-7 ամիսներուն առողջութիւնս քիչ մը տկարացած ըլլալուն պատճառով։ Յաջորդ տարուան առաջին միացեալ թիւը, որ արդէն մասամբ պատրաստ է, լոյս պիտի տեսնէ յառաջիկայ Հոկտեմբերի վերջերը։

Կը ցաւիմ որ ստիպուած պիտի ըլլամ յաջորդ տարեշրջանի ընթացքին եւս այս հանդէսը հրատարակել չորս ամիսն անգամ մը երեւոյդ երեք միացեալ թիւերով։ Այս ձեւով միայն կրնամ կանգուն պահել այս հանդէսը, (որուն ամբողջ բեռը, որ հետուէ թեթեւ ըլլալէ, անհատի մը ուսերուն վրայ կը ծանրանայ)։ Մեր բաժանորդներուն մէկ կարեւոր մասը դժբաղդարար կը յամառի չափազանց ուշ վճարել իր բաժնեզինքը։ Ահա երրորդ տարուան վերջին միացեալ թիւն է որ լոյս կը տեսնէ, եւ սակայն մեր բաժանորդներուն մէկ երրորդէն աւելին դեռ չէ վճարած իր բաժնեզինքը. եւ կան որ երկրորդ տարուանն ալ պարտական են տակաւին... Տնտեսական տագնապը չ'արդարացներ աչս անհոգութիւնը։ Անոնք որ կանոնաւոր բաժանորդ են, այսինքն առաջին եւ երկրորդ տարին վճարած են եւ երրորդ տարուան թիւերն ստանալ չուզելին մեզի չեն յայտնած, պարտէին՝ ու կրնային վերջապէս՝ եթէ բարի կամեցողութիւն ու մեր գործը դիւրացնելու քիչ մը փափաք ունենային, ցարդ վճարած ըլլալ իրենց երրորդ տարուան բաժնեզինքը։ Հակառակ տագնապին, «Անահիտ»ը ունի այսօր բաժանորդներու թիւ մը, որ պիտի բաւէր իր ծախքերը գոցելու եւ ինծի թոյլ տալու որ հանդարտ մտքով անոր հրատարակութիւնը շարունակէի,

եթէ բաժանորդները տարուան սկիզբը վճարէին իրենց բաժնեզինքը։ Ուրախ պիտի ըլլայի եթէ գէթ այսուհետեւ այդպէս ըլլար։

Կը խնդրեմ ուրեմն երրորդ տարուան բաժնեզինքը դեռ չվճարած մեր ընթերցողներէն որ հաճին զայն ղրկել ինծի իսկոյն կամ յանձնել «Անահիտ»ի գործակալներուն (անոնք որ երկրորդ տարեկանն ալ պարտական են, անշուշտ երրորդին հետ միասին պիտի ղրկեն զայն), իսկ այն բաժանորդները որ երեք տարիէ ի վեր միշտ տարեշրջանին սկիզբը իրենց բաժնեզինքը ղրկելու սիրուն վերաբերմունքն ունեցած են, չեմ տարակուսիր որ այս չորրորդ տարուան սկիզբն ալ՝ ներկայ 5-6 թիւն ստանալնէն յետոյ՝ պիտի հաճին իրենց բաժնեզինքը ղրկել ինծի կամ յանձնել «Անահիտ»ի գործակալներուն։

Շնորհակալութիւններս կը յայտնեմ անգամ մը եւս իմ թանկագին ու անձնուէր աշխատակիցներուս, նուիրատու թիւններով այս հրատարակութեան դժուարութիւնները մասամբ թեթեւցնող զրասէր ազնիւ անձնաւորութեանց, եւ այն բարեկամներու որ գործակալութեան նեղացուցիչ բեռն ստանձնած են (եւ որոնցմէ կը խնդրեմ սակայն որ հաճին զանձումները շուտ կատարելու համար իրենց թափած ջանքերը կրկնապատկել)։ Ես պիտի շարունակեմ իմ բոլոր կրցածս ընել որպէսզի այս հանդէսին բովանդակութիւնը հետզհետէ աւելի ճոխ, ալիւզան ու գեղեցիկ դարձնելով՝ ցոյց տամ թէ մեր ազգային գրականութեան զարգացման ու յառաջացման նպաստելու նըպատակով հիմնուած այս թերթը անարժան չէ այն համակրութեան զոր ծանօթ եւ անծանօթ բարեկամներս ցոյց կուտան անոր հանդէպ։

Ա. Զ.

Փարիզ, 24 Յունիս 1932

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Մարտէյլ, Գառնիկ Յովհաննէսեան
Սէն Շամոն, Ս. Տէմիրճեան
Վիէն, Յակոբ Օհանեան
Վալանս, Կարապետ Թէրզեան
Պէյրուիթ՝ Պ. Յակոբ Աճէմեան
Գաշիւրէ, Օ. Մաշտեան

» Մասիս Զուրիկեան

Աղեքսանդրիա, Մելգոն Գասպարեան
Պոլիս, Ս. Յակոբեան գրատուն
Պրիւսէլ, Յ. Թովուզեան
Անվերս, Օր. Մելինէ Գովանճեան
Միլան, Ռ. Ճանիկեան
Յունաստան, Յ. Դարբինեան
Ֆիլիպէ, Մկրտիչ Կարապետեան
Պուրկազ, Թորոս Աւետիսեան
Նիւ Եօրք, Հայ Կրթական Հիմնարկութիւն.

Պ. Հրաչեայ Գ. Եռսուֆեան, «Կի-
լիկիա» գրավաճառանոց (Նիւ Եօրք եւ
Հրջակայք).

Պ. Յովհաննէս Մամասեան, «Մասիս»
գրավաճառանոց.

Լորէնս, Ա. Մ. Ահարոնեան

Լին, Պ. Գասապեան

Տիթրոյթ, Լեւոն Պէշկեթիւրեան

Սան-Ֆրանչիսքօ, Կ. Հ. Մալխասեան

» Րոյ. Գէորգ Մղրապեան

» Րոյ. Կ. Պրատֆօրտ, Գ. Զուլճեան

Րիչմոնտ, Ա. Յ. Ժամկոչեան

Ուոշինկթըն, Ժաք Պալտատեան

Ֆիլատէլֆիա, Դ. Ճէլալեան

Փրովիտէնս, Յարութիւն Ուլուհոճեան

Ուտորը, Մարտիրոս Զօպանեան

Լօս Անճէլէս, Խոսրով Էլմասեան

Շիքալօ, Օննիկ Նորհատ

Ֆրէզնօ, Պողոս Գույումճեան եւ Վահէ
Հայկ

Պաղտատ, Գէորգ Մ. Գասապեան

Ալեքսանտրէթ, Մարտիրոս Տէր-Ստեփան-
եան

Վիեննա, Ղազարոս Զատեան

Պուրթէշ, Հրանտ Վարդանեան

Վ. Գրիգորեան

Քոսթանձա, Եղուարդ Նազարեան

Արամ Թորոսեան

Պոսթըն, Կարապետ Փապուճեան

Լիօն, Պ. Եղիաեան

Հալէպ, Հայկ Ուղուրլեան եւ Պողարեան
գրատուն

“ԱՆԱՀԻՏ”Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիտ կը հրատարակուի չորս ամիսն
անգամ մը: Տարեկան բաժնեգինն է Ֆը-
րանսայի եւ Սուրիոյ և Պալքանեան երկիր-
ներու համար, 100 ֆրանք, վեցամսեայ 60
ֆրանք, իւրաքանչիւր թիւը 20 ֆրանք:

Ուրիշ երկիրներու համար 5 տոլար, վե-
ցամսեայ 3 տոլար, իւրաքանչիւր թիւը
մէկ տոլար: Բաժնեգինները պէտք է ղըր-
կուին ուղղակի թերթիս հիմնադիր-անօրէն
A. Tchobanianի, 9, rue Say, Paris, կամ
պէտք է յանձնուին մեր գործակալներուն: